ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

—

Հայոց Ազգագրական ընկերութիւնը հայ գրերի և տպագրութեան յոբելեանը տօնում է այսպէս.

1) Մասնակցում է ս. Էջմիածնի յոբելեանական հանդէսներին՝ ուղարկելով ներկայացուցիչներ։

2) Կազմում է հայկական հրատարակութիւնների ցուցահանդէս մասմաս։ Այս տօներին ցուցադրւում են ռուսահայ ամբողջ պարբերական մամուլը և ազգագրական բոլոր հայերէն հրատարակութիւնները. այս առթիւ արդէն կազմւած է բոլոր նշանաւոր յօդւածների գրախօսութիւնը։ Միաժամանակ ցուցադրւում է ռուսահայ բոլոր խմբագիրների խմբանկարը։

3. Տեղի կունենան հետևեալ դասախօսութիւնները.

ա) Գրի և տպագրութեան կատարած դերը հայերիս մէջ. դասախօսելու է Ե. Լալայեան.

բ. Հայ գրերի զարգացումը. դասախօսելու է Գարեգին վարդապետ Յովսէփեան.

գ. Հայ պարբերական մամուլը, դասախօսելու է Մ. Մատէնճեան.

դ. Հայ ազգագրութիւնը. դասախօսելու է Խ. Սամուէլեան։

4) Այս տօներին լոյս կը տեսնեն.

ա. «Ազգագրական Հանդիսի» XXIV գիրքը.

բ. «Մարգարիտներ» հայ բանահիւսութեան պարբերական ժողովածուի I գիրքը.

գ. «Նիւթեր հայ մելիքութեան» ժողովածուի I պրակը։